րուն փոքր դուռ մի, որ հանապազ գոց է ի հանդիսաւուր կու բանան զնա։ Եւ սորա քով պատին երեսն փոքր խորան մի որ անուն կոչի սուրբ Գէորգ. այս խորան, եթէ կամիս հարցանել զպատճառն ասեմք փոքր ի շատէ։ Ժամանակաւ կամեցեր են թէ զՍ. Յակոբ յափշտակել ի ձեռաց հայոց ազգիս, ոմն թագաւոր՝ որ մէլիք Սալահէտին կոչիւր. անց կ'առնէ թէ կամի գնալ պատերազմ. սոյն տաճկունքն իբրև կ. շ. հ. թէ թագաւոր այն ինչ աղէկ ճամի կու լինայ ասելով. և սա կը մօհրէ զգոներն, երթամ պատերազմ և գամ տեսանեմ թէ կանթեղն վառ մնայ նէ Հայոց կուտամ, եթէ չէ նէ՝ ճամի կու չինեմ. մինչ նա գընայ եւ գայ՝ այս վերոյգրեալ խորանն ժամ կ'անէին մինչև 3 տարի, յետ 3 տարւոյ գալն թագաւորին մոռացեր. կամի թէ անցնի գնայ, ևս կրկին այն առաջին իրն միտքն կու ձգին թէ թագաւոր դու ինչ պայման արեր, ահա կու գնաս հայ և նորա այլ միտքը կուգայ յետ կու դառնայ կուգայ դուռն Ս. Յակոբայ կու տեսանէ որ երեք այր լուսաւոր շապիկ զգեցեալ ձեռվնին մոմ՝ թագաւորին առջևէ կու գնան Սուրբ Յակոբայ ներսի դուռն, եւ թագաւորն կու տեսանէ զկնիքն որ իւրն է ի մէջ ամբոխին կու բանայ զդուռն և կու մտանին ներս. այսր և անդր հային որ երեք կանթեղ վառ կայ, որ սարդն ի վերայ կանթեղին հովանի է եղեր, և արքն այնոքիկ անյայտ կը լինան. եւ թագաւորն կ'ասէ թէ ուր են այն երեք արքն որ առաջի իմ սպիտակ զգեստիւք և մոմեղինօք կային. այժմուս ոչ երեւան։ Եւ միաբանքն կ'ասեն թէ ով թագաւոր ոչ ոք չկայ ի միջի մերում քո ասածն եւ ոչ ոք մոմ վառեց կամ զգեստիւք կար, թագաւորն իմաստուն գոլով ասացեր է թէ այս մանուսդրս որո՞ց